Ներկայումս տարբեր երկրներում զարգացած է շատ անհավասարաչափ: Տուրիստները առավելապես դուրս են գալիս զարգացած երկրներից, որոնք Միացյալ ազգերի կազմակերպության միջազգային տուրիստական կազմակերպության տերմինաբանության համաձայն համարվում են տուրիստների մատակարարներ: Դրանք այն երկրներն են, որտեղ երկրիսահմաններից դուրս ուղևորությունների մեկնողների թիվը գերազանցում է բնակիչների տաս տոկոսը: Նման երկրների թիվը մեծ չէ (12-17), սակայն նրանց թիվը մշտապես համալրվում է: Բացի Արևմտյան և Հյուսիսային Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի զարգացած երկրներից, Ճապոնիայից մինչև վերջերս նրանց թվին էին պատկանում Արևելյան Եվրոպայի և Պարսիկ ծոցի տարածաշրջանի պետությունները: Ներկայումս նրանց տեղն ակտիվորեն գրավում են զարգացող այնպիսի երկրներ ինչպիսիք են Կորեայի Հանրապետությունը, Սինգապուրը և այլն:Տուրիզմի զարգացման երկարաժամկետ հեռանկարները Միացյալ ազգերի կազմակերպության միջազգային տուրիստական կազմակերպության փորձագետների համաձայն օպտիմիստական են: Նրանց կանխատեսումների համաձայն 2010թ.-ին աշխարհում տուրիստական ճամփորդության կմեկնի մոտ 1մլրդ. մարդ, 2020թ.-ին՝ մինչև 1.5մլրդ, իսկ տուրիզմից ստացվող եկամուտները կկազմեն ավելի քան 2 տրլիոն ԱՄՆ դոլար:

ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

21-րդ դարի սկզբին, երբ ԱՊՀ անդամ երկրների մեծ մասին բնորոշ և նախկինից մասամբ պահպանված կապերի ու ներուժի գործող զարգացման իներցիոն մոդելը իրեն քիչ-քիչ սպառում է, նախկին միասնական խորհրդային պետություն կազմող երկրները մոտեցել են իրենց պատմության սկզբնական պահին և օրվա խնդիր է դարձել զարգացման ուղիների որոնումը, (որը ներառում է արտաքին կողմնորոշիչների փնտրումից մինչև ներքին սոցիալ-տնտեսական մոդելի ստեղծումը): Իսկ աշխարհում գերիշխող միտում է հանդիսանում միջպետական, նախ և առաջ, տնտեսական միավորումների ստեղծումը (ինչպես օրինակ Եվրամիությունը, NAFTA-ն և այլն):

Ռուսաստանի, Չինաստանի, Եվրամիության նման հզոր կառույցների հարևանությամբ գտնվող նորանկախ պետությունները պետք է ճիշտ կարողանան կողմնորոշվել, թե ինչ համակարգի են ուզում ինտեգրվել: Արդյոք նրանք պատրա՞ստ են քաղաքական և տնտեսական որոշումներ կայացնելիս զոհաբերել իրենց ինքնուրույնությունը՝ հանուն առավել հզոր, վերազգային կառույցներին մասնակցելու օգուտների: Կամ՝ արդյո՞ք ինտեգրացիոն սցենարը միակ հնարավոր ուղին է զարգացման խնդիրների լուծման գործում:

Այս հարցերին պատասխանելու անհրաժեշտության խնդրին է բախվել նաև Հայաստանը: Որպես փոքր, սուղ բնական ռեսուրսներով ցամաքային երկիր՝ Հայաստանը չունի այլընտրանք, քան լինել հնարավորինս բաց միջազգային առևտրի համար և լիարժեք ինտեգրվել գլոբալ տնտեսությանը: Այս ուղղությամբ կատարվել և կատարվում են լուրջ աշխատանքներ, որոնցից առավել հիշատակման արժանի է ԱՀԿ-ին և միջազգային առևտուրը պարզեցնելու ուղղությամբ աշխատող բազմաթիվ միջազգային կազմակերպություններին անդամակցելու փաստը:

Հայաստանի ներդրումային և առևտրային քաղաքականությունը միջազգային կազմակերպությունների և վարկանիշային կառույցների կողմից բազմիցս հիշատակվել է որպես «ԱՊՀ-ում ամենաբաց քաղաքականություններից» մեկը: Հայաստանում չկան սահմանափակումներ գումարների փոխանցման և փոխանակման համար, չեն սահմանափակվում նաև օտարերկրացիների՝ սեփականություն ունենալու իրավունքները, օտարերկրացի աշխատողների քանակն ու ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը:

Սակայն Հայաստանը ունի մի շատ լուրջ խնդիր՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, որը լինելով Հայաստանի անվտանգությանն ու արտաքին քաղաքականությանը սպառնացող ամենալուրջ վտանգը՝ բացասական հետևանքներ ունի նաև տնտեսական զարգացման համար: Այդ մասին պաշտոնական հայտարարություններ արել են ինչպես ԱՄՆ-ի և և Եվրամիության մի շարք երկրների կառավարությունները, այնպես էլ Թուրքիան, որն այս հակամարտությունը համարում է Կովկասում քաղաքական կայունության հաստատման, տնտեսական զարգացման և տարածաշրջանային համագործակցության հիմնական խոչընդոտը:

Այս հակամարտության հիմնական առանձնահատկությունն այն է, որ քաղաքական տեսանկյունից պատերազմի մասնակից կողմերը երեքն են, իսկ Ադրբեջանը հակամարտության կողմի որոշման խնդիր է դրել ու չի ընդունում ԼՂՀ-ն՝ որպես հակամարտության կողմ: Բացի այդ, հակամարտությունը երկու կողմից էլ դիտավորյալ ձգձգվում է, որովհետև մի կողմից հայերը հույս ունեն ստատուս-քվոյի ձեռքբերման, իսկ մյուս կողմից ադրբեջանցիները ամեն ինչ կապում են նավթային բումի և բանակի հզորացման հետ:

Կողմերից յուրաքանչյուրը, այդ իմաստով կարծում է, թե ժամանակն աշխատում է իր օգտին. Բաքուն պահանջում է տարածքային ամբողջականություն, իսկ հայերը՝ ազգային ինքնորոշման իրավունք և վիճելի հարցերի փաթեթային լուծում, իսկ ժամանակը, ըստ էության, թշնամանքի ու դիվանագիտական անհամաձայնության հողի վրա աշխատում է ի վնաս երկու կողմերի տնտեսական զարգացման:

Համաշխարհային փորձը նմանատիպ հարցերը լուծում է բնակչության ազատ կամքը քվեարկությունների միջոցով արտահայտելով և չնայած 1991թ. նման լուծում արդեն տրվել է, Ադրբեջանը պնդում է, որ իրենց ձայնը չեն արտահայտել ղարաբաղյան ադրբեջանցիները: Կրկնակի հանրաքվե իրականացնելը հայերի կողմից գրեթե բացառվում է, սակայն նույնիսկ այդ դեպքում արդյունքները ակնհայտ պարզ են, որովհետև Ղարաբաղում այլևս ոչ մի ադրբեջանցի չկա:

Այստեղ մեծ կարևորություն ունի նաև թուրքական գործոնը, որը բացարձակ ադրբեջանամետ կողմնորոշում ունի, իսկ հայ-թուրքական հարաբերությունների հաստատման կանխորոշիչը և ներազդող գործոնը դարաբաղյան հակամարտության հետևանք հանդիսացող հայ-ադրբեջանական հակասությունն է:

Հայաստանի անկախացումից հետո հայ-թուրքական հարաբերությունների զարգացմանն ուղղված քայլերն ընթանում են երկու հակադիր ուղղություններով: Նկատվում է հարաբերությունների հետագա զարգացման նախապայմանների առաջադրում՝ թուրքական կողմի հետ խնդիրների առկայության պատճառով և միաժամանակ նկատելի է հայկական կողմի՝ այդ հարաբերություններն առանց նախապայմանների զարգացնելու ցանկությունը:

Այստեղ ավելանում է նաև 3-րդ երկրների գործոնը, որոնք ցանկանում են Թուրքիան տեսնել որպես տարածաշրջանային գերտերություն կամ որպես տարածաշրջանային անբավարար լրջություն ունեցող սուբյեկտ, որի դերը սահմանափակվում է միայն Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում իր շահերն իրականացնելու նպատակով:

Չնայած որ երկու պետություններն էլ շահագրգռված են բնականոն հարաբերությունների կայացման հարցում, սակայն նրանց շահերը շատ քիչ են համընկնում: Հարաբերությունների շտկումը կկիրառվի միայն զուտ միակողմանի պլանների իրականացմամբ: Ահա թե ինչն է պատճառը, որ այս խնդրի լուծման դեպքում առկա է վտանգ և հավանականությունը, որ երկու կողմերից որևէ մեկը կհայտնվի պարտվողի դերում:

Այսօր Թուրքիան Անդրկովկասը դիտում է որպես Կենտրոնական Ասիան իրեն կապող միջանցիկ տրանսպորտային ուղի: Բացի այդ, Թուրքիային հարկավոր են նաև անդրկովկասյան երկրների շուկաները, և նա ցանկանում է ավելի շուտ գրավել այն, քան դա կհաջողվի անել Իրանը, այդ պատճառով նրան անհրաժեշտ է տարածել այստեղ իր տնտեսական գերիշխանությունը և հսկողության տակ պահել Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի արտաքին տնտեսական հարաբերությունները: Վերջին 2-ի պարագայում այս կամ այն չափով նրան հաջողվում է: Սակայն 1993թ.-ից Թուրքիան փակ է պահում Հայաստանի հետ իր սահմանը, ինչը լրջորեն դժվարացնում է գերիշխանությանը հասնելու նրա պլանների իրականացումը: Նման իրավիճակը խոչընդոտում է Թուրքիային սևծովյան տնտեսական համագործակցության ինտեգրացիոն խմբավորման մեջ ընդգրկվելու հարցում ևս, որի հիմնական նպատակն է իրականացնել Կենտրոնական Ասիայի և Անդրկովկասի էներգառեսուրսների մատակարարումը Եվրոպային՝ շրջանցելով տարածաշրջանային մյուս լիդերներին:

Հայաստանին, բնականաբար, ձեռնտու է Թուրքիայի հետ տնտեսական հարաբերությունների շտկումը և ելքը դեպի սևծովյան նավահանգիստներ: Թեպետ, միևնույն ժամանակ, շրջափակման պայմաններին արդեն ընտելացած հայկական տնտեսություն թուրքական կապիտալի գրեթե անսահմանափակ ներհոսքը կարող է լուրջ փորձությունների հանգեցնել: Այնուամենայնիվ, Թուրքիան գերազանց պատկերացնում է, որ Հայաստանի համար արտաքին աշխարհի հետ կապն անհամեմատ գերադասելի է շրջափակումից:

Հարկ ենք համարում հիշեցնել նաև, որ նույնիսկ տնտեսական հարցերի լուծման պարագայում հայ-թուրքական հարաբերություններում բաց է մնում մի կարևոր հիմնախնդիր ևս՝ հայերի ցեղասպանությունը: Իսկ Թուրքիան չի ընդունում տվյալ փաստը՝ վախենալով, որ հայերի համար այս հարցի դրական լուծումը կարող է նաև քրդական շարժման սկիզբ դառնալ, իսկ դրանով կարող է խախտվել իր պետական տարածքային ամբողջականությունը: Մյուս կողմից, ցեղասպանության հարցն է պատճառներից ևս մեկը, համաձայն որի Եվրոպան հրաժարվում է Թուրքիան ընդունել Եվրամիության կազմի մեջ:

Այստեղ ակնհայտ է դառնում, որ հայ-թուրքական հարաբերությունների զարգացման գործում մեծ նշանակություն ունեն 3-րդ երկրները, և տպավորություն է ստեղծվում, որ միջազգային առաջատար տերությունները Թուրքիայի հետ արտաքին հարաբերություններում ակտիվորեն հենվում են հայկական հիմնախնդրի վրա: Հայտնի է, որ ԱՄՆ-ը, որը հանդիսանում է տարածաշրջանում կայունության հաստատման ամենաակնառու պայքարողը, հանդես է գալիս հայ-թուրքական հարաբերությունների բարելավման օգտին: Տվյալ պարագայում Թուրքիան նշանակալիորեն կորցնում է իր հեղինակությունը՝ որպես երկրի, որի հետ հաշվի են նստում, և վերածվում է ԱՄՆ-ի շահերի միջնորդի ու ներկայացնողի: Այդ իսկ պատճառով նրան անհրաժեշտ է որքան հնարավոր է ավելի երկար կտրվածքով ձեռնպահ մնալ Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումից:

Սակայն միևնույն ժամանակ, Ադրբեջանի հետ անմիջական կապի իրականացման և այնտեղից Կենտրոնական Ասիա տարածվելու համար հետխորհրդային առաջին իսկ շրջանից Թուրքիան կարևորում է ՀՀ հետ իր հարաբերությունների ռազմավարությունը: Դա ելնում է այն մտավախությունից, որ տեսանելի ապագայում Ռուսաստանը Հարավկովկասյան տարածաշրջանում կրկին կամրապնդի իր դիրքերը, իսկ Հայաստանի հետ բնականոն կապերի հաստատումը կարող է չեզոքացնել դրա հնարավորությունը: Այս առումով որոշակի խոչընդոտ է հանդիսանում նաև Հայաստանում ռուսական զինվորական բազայի առկայությունը, ինչպես նաև խորացվող հայ-ռուսական տնտեսական համագործակցությունը: Սակայն նման իրավիճակը Հայաստանի երաշխիքն է, որ Թուրքիայի հետ գործնական հարաբերությունների հաստատումից ավելի փոքր կորուստներ կլինեն:

Այսօր, երբ խոսվում է հայ-թուրքական սահմանի բացման, երկու երկրների միջև նորմալ հարաբերությունների հաստատման անհրաժեշտության մասին, որպես դրա գլխավոր հիմնավորում՝ բերվում է սահմանի բացման տնտեսական շահավետությունը: Անկասկած, Հայաստանի և հարևան պետությունների միջև սահմանների փակ լինելը բացասական ազդեցություն է թողնում Հայաստանի տնտեսության վրա:

Ամենակարևոր գործոնը, որն անուղղակիորեն վկայում է այդ մասին արտահանման և ներմուծման ծախսերի կառուցվածքում տրանսպորտային ծախքերի տեսակարար կշիռն է, որը, ինչպես ցույց են տալիս AEPLAC-ի կողմից կատարված ուսումնասիրությունները, կազմում է ապրանքի ինքնարժեքի 20-25%-ը: Այս առումով ՄԱԿ-ի և մասնավորապես Համաշխարհային բանկի ու Արժույթի միջազգային հիմնադրամի

փորձագետները ևս ունեն որոշակի գնահատումներ, և նրանց կարծիքով Հայաստանի կողմից այսօր վճարվող տրանսպորտային ծախքերն աշխարհում ամենաբարձրերից են, իսկ Հայաստան-Թուրքիա սահմանի բացումը կարող է նպաստել բեռնափոխադրումների 30-50% իջեցմանը (կարելի է ծանոթանալ ՄԱԿ-ի ինտերնետային կայքում (www.un.org) տեղակայված վերլուծություններում):

Չնայած Թուրքիան լիովին չի հրաժարվել Հայաստանի հետ շփումներից (ինչի մասին վկայում է Սնծովյան տնտեսական համագործակցության անդամ երկրների հիմնադիր համաժողովին Հայաստանի մասնակցությունը)՝ այնուամենայնիվ, այսօր փաստ է, որ թուրքական սահմանը փակ է, իսկ Հայաստանի տնտեսական զարգացման հեռանկարները մեծապես պայմանավորված են արտահանման ծավալներով:

Այսպիսով, ստացվում է, որ մոտ ապագայում Ադրբեջանի և Թուրքիայի հետ սահմանները փակ են լինելու Հայաստանի համար, և վերջինս զրկված է իր չորս հարևաններից երկուսի հետ տնտեսական և նույնիսկ դիվանագիտական հարաբերություններ ստեղծելու հնարավորությունից: Արդյունքում Հայաստանի՝ Արևմուտքի և Ռուսաստանի հետ առևտրի հիմնական մասը գործնականում իրականացվում է Վրաստանի տարածքով կամ տեղափոխվում օդային ճանապարհով:

Իսկ Վրաստանը, ունենալով բացարձակ արևմտամետ կողմնորոշում և վախենալով տնտեսապես շահավետ և իր քաղաքական կողմնորոշմանը չվնասող Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերությունների խզումից, անկայունություն է մտցնում հայ-վրացական հարաբերություններում, իսկ Ռուսաստանի ազդեցության բացակայության պայմաններում չէր բացառվի նաև վրացական սահմանի փակումը:

Այս առումով Իրանը Հայաստանի միակ սահմանակից պետությունն է, որի հետ հարաբերությունների հետագա զարգացումը հեռանկարային է և հուսադրող: Իսկ Իրանի հետ հարաբերությունների զարգացումը ցանկալի է ոչ միայն Իրանի և Հայաստանի համար: Հայ-իրանական հարաբերությունների զարգացումը Իրանին հնարավորություն է տալիս դուրս գալ Ռուսաստան և եվրոպական տարածաշրջանի երկրներ, Հայաստանի համար ռուսական կողմից ստացվող նավթի և գազի ներմուծման այլընտրանք է, որը հնարավորություն է տալիս խուսափել հնարավոր շրջափակման վնասներից, և կապող օղակ է ասիական տարածաշրջանի երկրների հետ:

Հայ-իրանական հարաբերությունների զարգացմանը դեմ չեն նաև Ռուսաստանը և եվրոպական երկրները, որովհետև դա իրենց կարող է հնարավորություն տալ տարածել իրենց ազդեցությունների ալիքը Իրանի ուղղությամբ: Իսկ դա շատ իրական և հնարավոր է, որովհետև պաշտոնական Հայաստանը երկրի աշխարհագրական և քաղաքական իրավիճակին մոտեցումը կատարում է «կոմպլեմենտար» տարածաշրջանային քաղաքականության միջոցով: Իսկ այս մոտեցումը ենթադրում է խուսափել տարածաշրջանային և համաշխարհային բլոկների հետ սերտ միավորումից, բայց, միաժամանակ, համագործակցային հարաբերություններ հաստատել բոլոր հարևան պետությունների և բոլոր տնտեսական, քաղաքական կամ ռազմական կառույցների հետ: «Կոմպլեմենտարության» հենց այս գաղափարով է առաջնորդվում Հայաստանը տարածաշրջանի ու համաշխարհային գերտերությունների հետ իր հարաբերությունները կառուցելիս:

Սակայն այստեղ կա մի շատ կարևոր խնդիր ևս՝ Մերձավոր Արևելքի տարածաշրջանային հիմնախնդիրների առկայությունը:

Առաջատար տերություններին և համաշխարհային հանրությանն ընդհանրապես գլխավոր մարտահրավերը, կարելի է ասել, բխում է «Ընդլայնված» Մերձավոր Արևելքի տարածաշրջանից: Սա այն աղեղն է, որի վրա տեղակայված են Հյուսիսային Աֆրիկայի, Մերձավոր և Միջին Արևելքի, Պարսից Ծոցի և Կենտրոնական Ասիայի պետությունները՝ ընդհուպ մինչև հարավարևելյան Ասիայի երկրներ: Նախկինում այս խումբ երկրներին ամերիկյան գիտնականներն ու պաշտոնատար անձինք անվանում էին Մեծ Մերձավոր Արևելք: «Ընդլայնված» Մերձավոր Արևելք հասկացությունը շրջանառության մեջ դրվեց 2004թ. հունիսին՝ «Մեծ ութնյակի» գագաթաժողովում:

Այս հսկայական տարածքի հենց սրտում է գտնվում մեր հարևան Իրանը: Բազմաթիվ հանգամանքների բերումով այսօր հենց Իրանից է կախված ողջ միջավայրի կայունությունն ու կառավարելիությունը: Եվ կախված այն բանից, թե ինչպես կզարգանա այս պետությունը, ինչպես կկառուցվեն նրա հարաբերությունները ԱՄՆ-ի, Եվրամիության և Ռուսաստանի հետ, կկանխորոշվի, թե հետագայում կշարունակվի՞ այս տարածաշրջանի դեգրադացիան, թե՞ բացասական գործընթացները կշրջադարձվեն, ու միջավայրը բաց կլինի մոդեռնացման, հետագայում՝ նաև դեմոկրատացման համար: Իսկ Իրանը մի շարք օբյեկտիվ պատճառներով հնարավորություն ունի դառնալ «ընդլայնված» Մերձավոր Արևելքի տարածաշրջանի լիդեր:

Իրենց հերթին Արևմուտքի և Ռուսաստանի ռազմավարությունները հնարավորություն ունեն որոշակիորեն ազդել Իրանի, հետևաբար նաև ողջ տարածաշրջանի վրա: Սրանք կամ օգնում են Իրանին ամբողջությամբ կանխատեսվող և արտաքին ուժերի շահերին համապատասխան քաղաքականություն վարել և նպաստում տարածաշրջանային գերտերություն դառնալուն, կամ պահպանելով ներկայիս ռազմավարությունը՝ դառնում են տարածաշրջանում ԱՄՆ-ին, Եվրամիությանը և Ռուսաստանին հակակշռող Թեհրանի գերիշխանության հաստատման և միջուկային զենքի ձեռքբերման լուռ վկաներ: Իսկ սա, իր հերթին, առաջ է բերում «Ընդլայնված» Մերձավոր Արևելքի տարածաշրջանի կառավարելիությունը լրիվ կորցնելու սպառնալիք:

Տարածաշրջանում իրադարձությունների վրա ազդող գլխավոր արտաքին ուժը միանշանակ հանդիսանում է ԱՄՆ-ը: Իսկ նրա քաղաքականությունը շատ հակասական է: ԱՄՆ-ը Իրանը դիտում է որպես միջազգային ահաբեկչության հովանավոր, պաղեստինյան ահաբեկչության կազմակերպությունների հենարան և չտեղաբաշխված զանգվածային ոչնչացման զենքերի հիմնական վտանգներից մեկը:

Իրանի նկատմամբ իրականացվում է մշտական հսկողության և «ճնշման» քաղաքականություն, և չեն դադարեցվում նրա տնտեսական և դիվանագիտական մեկուսացման փորձերը: Սպիտակ Տունը միշտ մեղադրում է Իրանին Միջուկային զենքի չտարածման պայմանագիրը խախտելու գործում և սպառնում Իրանի «գործը»

հանձնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ, ինչը կարող է հանգեցնել Թեհրանի նկատմամբ որոշակի սանկցիաների կիրառման: Այստեղ պետք է նշել, որ ԱՄՆ-ը մշտապես ճնշում են գործադրում այն երկրների վրա, որոնք համագործակցում են կամ փորձում են համագործակցել Թեհրանի հետ ատոմային էներգետիկայի բնագավառում: Իսկ ինչ վերաբերում է Իրանի և ԱՄՆ-ի հարաբերություններին, այստեղ չի բացառվում ուժային ազդեցությունը, սակայն միևնույն ժամանակ դա չի համարվում անխուսափելի, և ավելի շատ գործադրվում է դիվանագիտական ճնշման մեխանիզմը:

Հիմնական խոչընդոտը, որը թույլ չի տալիս քանդել տարածաշրջանային հակամարտությունների և տարաձայնությունների հանգույցը, կայանում է նրանում, որ ԱՄՆ կարծիքով Իրանը ուժի վտանգավոր կենտրոն է, և անհրաժեշտ է կամ կասեցնել նրա ամրացումը, կամ գոնե ստեղծել նրա հակակշիռը: Ընդ որում, առավել մեծ վտանգ է իրենից ներկայացնում 72 մլն բնակչություն ունեցող Իրանի թուլացումը, քանի որ դա կարող է կործանիչ ազդեցություն ունենալ ողջ տարածաշրջանի համար: Իսկ Արևմուտքի և Ռուսաստանի համար հիմնական սպառնալիք է ոչ թե «Ընդլայնված» Մերձավոր Արևելքի հզորացումը, այլ թուլացումը:

«Ընդլայնված» Մերձավոր Արևելքի առումով Արևմուտքի առաջատար երկրների և Ռուսաստանի շահերը հիմնականում համընկնում են: Իրաքում ԱՄՆ-ի ձախողումից հետո հիմնական խնդիրը կայանում է ոչ թե նրանում, թե ինչպես օպտիմալ վերակառուցել և դեմոկրատացնել «Ընդլայնված» Մերձավոր Արևելքը, այլ նրանում, թե ինչպես թույլ չտալ դրա լրիվ փլուզումը:

Այս առումով և՛ Արևմուտքի, և՛ Ռուսաստանի գլխավոր խնդիրը տարածաշրջանի կայունության և կառավարելիության ապահովումն է, ինչը ենթադրում է միասնական քաղաքականության իրականացում: Վերջինս էլ ենթադրում է նախ և առաջ տարածաշրջանի տարածքների կառավարման պետական հիմքերի ամրացում, կառավարման ռեժիմների հետ փոխհամաձայնեցված համագործակցության հաստատում և կրթության մակարդակի աստիճանական բարելավման միջոցով աստիճանաբար դեմոկրատական գաղափարների տարածում:

Տարածաշրջանի կայունացման հարցում հիմնական սկզբունքը լինելու է հենց տարածաշրջանային ուժերի կենտրոնացումը, քանի որ միայն արտաքին ուժերի հաշվին (եթե նույնիսկ միավորվեն ԱՄՆ-ի, Եվրոպայի և Ռուսաստանի ուժերը) կայունության հասնել հնարավոր չէ. անհրաժեշտ է ուժեղ գործընկեր ունենալ հենց ներսում: Իսկ այս գործում ամենահավանական և գրեթե միակ թեկնածուն Իրանն է: Սա տարածաշրջանի միակ կայուն զարգացող երկիրն է: Լինելով զարգացող պետություններ՝ և՛ Պակիստանը, և՛ ԱՄԷ-ը կայուն չեն: Իսկ Իրանը իր հարևանների համեմատությամբ ավելի պակաս վտանգավոր է միջազգային ահաբեկչության և իսլամական էքստրեմիզմի տեսանկյունից: Որպես կայուն և զարգացող պետություն՝ Իրանը գրեթե ոչ մի հնարավորություն չի տալիս ահաբեկիչներին իր տարածքում հաստատվելու և բնակիչներին իրենց շարքերն ընդգրկելու հարցում: Թեհրանը կառուցողական հարաբերություններ է ստեղծել գրեթե իր բոլոր հարևանների հետ և նրա արտաքին քաղաքականությունը երկար ժամանակ է, ինչ բնութագրվում է ազգային շահերից բխող պատկերացումներով, այլ ոչ թե ռադիկալ շիիթական գաղափարախոսությամբ:

Շիիթական և քրդական խնդրի լուծումը Իրաքում և ողջ Միջին Արևելքում, իսրայելապաղեստինյան հակամարտության կարգավորումը, Աֆղանստանի դրության կայունացումն ու աֆղանա-իրանա-պակիստանյան սահմանի վրա ահաբեկչության օջախի վերացումը, Աֆղանստանում և Պակիստանում իսլամական էքստրեմիզմի վտանգի չեզոքացումը անհնար է իրականացնել առանց Թեհրանի մասնակցության, իսկ Իրանի դեմ ուղղված յուրաքանչյուր քայլ կարող է վերջնականապես ջախջախել առանց այդ էլ դեգրադացող և անկայուն տարածաշրջանը: Այլ կերպ ասած՝ տարածաշրջանը կառավարելու համար անհրաժեշտ է գործել ոչ թե Իրանի դեմ, այլ Իրանի հետ, ինչքան էլ դա դժվար թվա:

Այս ռազմավարության հիմնական ուղղությունը պետք է դառնա Իրանի՝ որպես ուժեղ, բայց Արևմուտքի և Ռուսաստանի համար ոչ վտանգավոր գերտերության, խաղաղ կայացման գործընթացի կարգավորումը: Անհրաժեշտ է Իրանը ներգրավել միջազգային հանրության մեջ՝ որպես անվտանգ և կանխատեսելի սուբյեկտ, որն արտաքին քաղաքականության մեջ դրսևորում է քաղաքակիրթ և օրինապաշտ վարքագիծ:

Սակայն իրականում Իրանը այնքան էլ իրեն կառավարել թույլ տվող սուբյեկտ չէ և դա տեղի չի ունենա ոչ Իրանի պետական ռեժիմի բնական (ներսից իրականացված) փոփոխության, ոչ նրա գոյության կայունության պայմաններում և ոչ էլ ԱՄՆ-ի և Եվրոպայի հետ քաղաքական համագործակցության պայմաններում:

Իրանի ցանկացած կառավարություն միջուկային զենքի ձեռքբերումը կհամարի հիմնական գերակայություն, իսկ մի շարք փորձագետների կարծիքով՝ միջուկային էներգետիկայի զարգացումը Իրանում բարձրացված է մինչև ազգային գաղափարախոսության մակարդակ, որին նպաստում է նաև այն հանգամանքը, որ միջուկային զենք ունեն հարևան պետություններից Իսրայելը, Հնդկաստանը, Չինաստանը, Պակիստանը, Ռուսաստանը, իսկ Իրաքի պատերազմից հետո Իրանի քաղաքական գործիչների մի մասի կարծիքով Արևմուտքի ագրեսիայից պաշտպանության լավագույն միջոցը միջուկային զենքն է:

Այդ իսկ պատճառով բացառված չէ, որ եթե գերտերությունները դադարեցնեն Իրանի վրա ճնշումը և սկսեն կառուցել քաղաքական և տնտեսական համագործակցության (այդ թվում նաև տարածաշրջանի կառավարման) պլաններ, Թեհրանը դա կարող է մեկնաբանել որպես թուլության դրսևորում և միայն կարագացնի իր միջուկային ծրագիրը:

Տպավորություն է ստեղծվում, որ Արևմուտքի և Ռուսաստանի կողմից Իրանի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն ավելի շուտ կհանգեցնի անընդունելի արդյունքների:

Մի կողմից Իրանի վրա ճնշման դադարեցման և վերջին հաշվով միջուկային զենքի ձեռքբերման արդյունքում միանգամից կխաթարվի ոչ միայն Մերձավոր և Միջին Արևելքի անվտանգությունը, այլ նաև ականատես կլինենք Հարավային և Արևելյան Ասիայի ապակայունացման և արաբա-իսրայելական հակամարտության նոր պոռթկման, իսլամական աշխարհի և ԱՄՆ-ի միջև նոր հակամարտության, զանգվածային ոչնչացման զենքերի չտարածման ռեժիմի վերջնական փլուզման և նոր միջուկային մրցավազքի: Իսկ այս

հարաբերություններում Իրանի ամենահասանելի թիրախը մերձավորարևելյան տարածաշրջանից դուրս դառնում է Ռուսաստանը:

Մյուս կողմից Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի իրականացրած «մտրակի քաղաքականության» հետագա իրագործումը կհանգեցնի տարածաշրջանի առավել արագընթաց ճգնաժամի: Իսկ Իրանը, որը վաղ թե ուշ, միևնույն է, ձեռք կբերի միջուկային զենքը, կվերածվի ագրեսիվ, չհաշտվող և զանգվածային ոչնչացման զենք ունեցող տերության:

Այդպիսով, անկախ ամեն ինչից, Իրանը կդառնա տարածաշրջանի լիդերը: Սակայն բացասական զարգացման դեպքում նա չի նպաստի տարածաշրջանի կայացմանն ու կառավարելիության վերականգնմանը, այլ ընդհակառակը, կսկսի իրականացնել տարածաշրջանում արևմտյան և ռուսական ներկայությունը ամեն կերպ բացառող քաղաքականություն: Այստեղ, նախ և առաջ, պահանջվում է ԱՄՆ-ի, Եվրոպայի և Ռուսաստանի միասնականությունը և քանի դեռ վերոհիշյալ կողմերը շարունակում են առաջնորդվել միայն իրենց շահերով և Թեհրանին հնարավորություն են տալիս գործել «բաժանիր և տիրիր» սկզբունքով, տարածաշրջանի կառավարելիության մասին խոսք անգամ լինել չի կարող: Պետք է նշել նաև, որ Արևմտյան մոդելով Իրանի դեմոկրատացման և մոդեռնացման մասին անհրաժեշտ է ժամանակավորապես մոռանալ և փորձել տնտեսական ու քաղաքական համագործակցության եզրեր փնտրել նրա հետ:

Իսկ Հայաստանին՝ որպես փոքր տարածք և տնտեսություն ունեցող երկիր, որն առայժմ այնքան հզոր չէ, որ կարողանա իր ծանրակշիռ խոսքն ասել գլոբալ և տարածաշրջանային աշխարհաքաղաքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ, մնում է միայն շարունակել առաջնորդվել «կոմպլեմենտարության» սկզբունքով, փորձել դուրս չմնալ տարածաշրջանային զարգացման ծրագրերից և փորձել հասնել Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների բարելավման:

ՄՀԵՐ ԲԱԴԱԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՕՈՒՆ-ՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Եվ հարուստ, և աղքատ երկրների համար կարևորագույն խնդիր է արտահանման նորացումը և անհրաժեշտ մակարդակի վրա պահպանումը՝ տնտեսության զարգացման գործընթացում ավելի մեծ ներդրում ապահովելու նպատակով: Ինչպես ընկերություններն են ձգտում բարձրացնել իրենց արտադրական համակարգերի մրցունակությունը, այնպես էլ երկրները պետք է նպատակային աջակցություն ցույց տան տարբեր ոլորտներից այնպիսի արտադրությունների, որոնք առավելագույն ավելացված արժեքն են ստեղծում: Օտարերկրյա ներդրողները կարող են նպաստել ներդրումներն ընդունող երկրի արտահանման մրցունակության ամրապնդմանը տարբեր ուղիներով: Խնդիրն այն է, որ այդ գործընթացում անհրաժեշտ է օգտագործել երկրի առկա հնարավորությունները: Երկրները պետք է առավել արդյունավետ ճանապարհներով իրենց մարզերը ներգրավեն արտահանմանն ուղղված ներդրումներ, որոնք խրախուսվում են պետական ռազմավարության շրջանակներում, որպեսզի նման ներդրումները հստակ օգուտ տան տնտեսության զարգացմանը: Նույնիսկ ավանդաբար արտահանման ուղղված մեծածավալ ՕՈՒՆ-ներ ներկրող երկրները պետք է շարունակական մոդեռնիզացիա իրականացնեն, որպեսզի աշխատավարձի աճի պայմաններում չկորցնեն իրենց դիրքերը, որպես արտահանման բազա:

Կորպորատիվ ռազմավարություններում կատարվող դինամիկ փոփոխություններին, երկրների միջև արտահանմանն ուղղված ՕՈՒՆ-ների ներգրավման համար մրցակցային պայքարի ուժգնացմանը, կարգավորող մեխանիզմների և երկրների առջև դրվող զարգացման առաջնային նպատակների փոփոխությանը զուգահեռ փոփոխություններ են կրում նաև քաղաքականության մշակման և իրականացման գործընթացները: Չնայած, որոշակի վայրի մրցունակության որոշման համար հիմնական դեր է խաղում մակրոտնտեսական կայունությունը, տեխնոլոգիական պոտենցիալը և մարդկային ռեսուրսները, պետք է ուշադրություն դարձնել արտահանման ուղղված ՕՈՒՆ-ների հետ կապված քաղաքականությանը. մասնավորապես, թե ինչպես ներգրավել նման ներդրումներ, բարձրացնել դրանց որակական մակարդակը և դրանցից օգուտներ քաղել: Նշենք նաև, որ այս կամ այն քաղաքականության արդյունավետությունը կախված է կոնկրետ տնտեսական, պատմա-մշակութային, աշխարհագրական, և քաղաքական պայմաններից[1]:

Չնայած առևտրի ազատականացումը կարևոր խթան հանդիսացավ միջազգային արտադրական համակարգերի զարգացման և վերազգային կորպորացիաների (ՎԱԿ) կողմից արտահանմանն ուղղված արտադրությունների տարբեր երկրներում տեղակայման համար, անհրաժեշտ է նաև հետագայում զարգացնել զարգացած երկրների շուկաներ մուտքի հնարավորությունը, հատկապես այն ապրանքների համար, որոնց արտահանումը կարևորվում է զարգացող երկրների կողմից: Հայաստանի ներդրումային և առևտրային քաղաքականությունը միջազգային կազմակերպությունների կողմից համարվում են ամենաազատականացվածը ԱՊՀ երկրների շարքում: Օտարերկրյա ընկերությունների կողմից ներդրումները խրախուսվում են և նրանց նկատմամբ կիրառվում են միևնույն օրենսդրական պահանջները, ինչ տեղական կազմակերպությունների համար: Ներդրումների խթանման և պաշտպանության երկկողմանի պայմանագրեր են կնքվել 30 երկրների

[1] Դ.Ռոդրիկ, «Տնտեսական աճի քաղաքականություն» Նյու-Յորք 2003: